ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Թուրքմենստանի կառավարության միջև առողջապահության բնագավառում համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Թուրքմենստանի կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր

հաշվի առնելով երկու պետությունների ժողովուրդների միջև բարեկամության ավանդական կապերը,

նկատի ունենալով առողջապահության բնագավառում իրավահավասար և փոխշահավետ համագործակցություն ծավալելու Կողմերի շահագրգռվածությունը,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Կողմերը կնպաստեն առողջապահության բնագավառում համագործակցության զարգացմանն ու ընդլայնմանը:

Հոդված 2

Կողմերը կզարգացնեն փոխշահավետ համագործակցություն հետևյալ բնագավառներում.

- առաջնային ու մասնագիտացված բուժօգնության ցուցաբերում,
- մոր և մանկան առողջության պահպանում,
- կանխարգելիչ բժշկություն և շրջակա միջավայրի պահպանություն,
- դեղաբանություն և բժշկական տեխնիկա,
- սանատորաառողջարանային բուժում,
- վերականգնում, այդ թվում՝ պրոտեզային-օրթոպեդիկ պարագաներով և հաշմանդամների կյանքի պայմանները թեթևացնող միջոցներով ապահովման հարցերում,
- արտակարգ իրավիճակների բժշկասանիտարական հետևանքների կանխում և վերացում,
- օպերատիվ տեղեկության փոխանակում:

Հոդված 3

Կողմերը իրենց պետությունների քաղաքացիներին կցուցաբերեն անհատույց անհետաձգելի (շտապ) բժշկական

օգնություն: Մասնագիտացված պլանային բժշկական օգնությունն իրականացվում է առողջապահական մարմինների և հաստատությունների ուղեգրով կամ անմիջականորեն դիմելու ձևով՝ պայմանագրային հիմունքով:

Մի պետության տարածքում մշտապես բնակվող՝ մյուս պետության քաղաքացիները բժշկական ծառայությունից օգտվում են այն պետության քաղաքացիների համար նախատեսված պայմաններով, որում նրանք բնակվում են:

Հոդված 4

Կողմերից յուրաքանչյուրը փոխադարձ օգնություն կցուցաբերի առողջապահության համակարգի կատարելագործման, բժշկական մարմինների և հաստատությունների միջև ուղղակի կապերի կազմակերպման, ինչպես նաև մասնագետների փոխանակման, կոնֆերանսների, գիտաժողովների և սեմինարների անցկացման հարցերում:

Հոդված 5

Արտակարգ իրավիճակներում Կողմերը կապահովեն անհատույց անհետաձգելի բժշկական-խորհրդատվական օգնություն:

Հոդված 6

Առողջապահության բնագավառում համագործակցության կոնկրետ ձևերն ու պայմանները կկարգավորվեն Կողմերի համապատասխան պետական կառավարման մարմինների միջև կնքված առանձին համաձայնագրերով:

Հոդված 7

Անհրաժեշտության դեպքում Կողմերը սույն Համաձայնագրի իրագործման և փոխգործակցության շուրջ հանձնարարականների պատրաստման համար կարող են ստեղծել համատեղ հանձնաժողով:

Հոդված 8

Սույն Համաձայնագիրը կնքվում է հինգ տարի ժամկետով և ուժի մեջ է մտնում դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին Կողմերի փոխադարձ ծանուցման օրվանից: Դրա գործողությունն

ինքնաբերաբար կերկարաձգվի հաջորդ հնգամյա ժամանակահատվածներով, եթե Կողմերից ոչ մեկը համապատասխան ժամկետը լրանալուց առնվազն վեց ամիս առաջ մյուս Կողմին գրավոր չտեղեկացնի Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին:

Կատարված է Երևան քաղաքում 1996 թվականի մարտի 19-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, թուրքմեներեն և ռուսերեն, ընդ որում բոլոր տեքստերը հավասարազոր են: Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման հարցում տարաձայնություններ առաջանալու դեպքում հիմք կընդունվի ռուսերեն տեքստը:

Համաձայնագիրն ուժի մեջ է 1996 թվականի օգոստոսի 30-ից: